ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-556[1]-09.04.2020-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասում «տեսակներով» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենքի 18.1-րդ հոդվածով սահմանված դեպքերի» բառերը:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

2.Սույն օրենքով նախատեսված կարգավորումները տարածվում են 2020 թվականի մարտի 16-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-556[1]-09.04.2020-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասում «տեսակներով» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենքի 18.1-րդ հոդվածով սահմանված դեպքերի» բառերը:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1 . Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

2.Սույն օրենքով նախատեսված կարգավորումները տարածվում են 2020 թվականի մարտի 16-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

<<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին>> օրենքի նախագծի (Կ-556 09.04.2020-ԱՍ-*011/0*) նախնական քննարկման համար ներկայացված գրավոր առաջարկների:

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
Նարեկ Զեյնալյան	<<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին>> օրենքի նախագիծ (Կ-556 09.04.2020-ԱՍ-*011/0*)	«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» գործող օրենքի 18-րդ հոդվածի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներն իրավունք ունեն ցուցաբերել համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում ընտրված տեսակների շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզիա ստանալու և սույն օրենքի 18.1 հոդվածով նախատեսված դեպքերում:»	Ընդունվել է:	Ընդունվել է:
Նարեկ Զեյնալյան	<<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին>> օրենքի նախագիծ (Կ-556 09.04.2020-ԱՍ-*011/0*)	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ***Հոդված 1.*** «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքը լրացնել 18.1-րդ հոդվածով՝ հետեւյալ բովանդակությամբ. «Հոդված 18.1. Բժշկական օգնության եւ սպասարկման իրականացման առանձնահատկությունները արտակարգ իրավիճակներում 1. «Արտակարգ իրավիճակներում կամ արտակարգ իրավիճակով պայմանավորված արտակարգ դրության իրավական ռեժիմի պայմաններում բնակչության պաշտպանության բժշկական օգնության և սպասարկման միջոցառումների իրականացմանը, կառավարության սահմանած կարգով և ժամկետով տվյալ տեսակի կամ տեսակների բժշկական օգնության և սպասարկման	Ընդունվել է:	Ընդունվել է:

		իրականացման համար կարող են ներգրավվել այլ տեսակի կամ տեսակների բժշկական օգնության և սպասարկման լիցեզինա ունեցող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները:»: **2.** Արտակարգ իրավիճակներում կամ արտակարգ իրավիճակով պայմանավորված արտակարգ դրության իրավական ռեժիմի պայմաններում բնակչության պաշտպանության բժշկական օգնության և սպասարկման միջոցառումների իրականացմանը, կառավարության սահմանած կարգով և ժամկետով, տվյալ տեսակի կամ տեսակների բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար կարող են ներգրավվել ավագ և միջին բուժաշխատողներ, որոնց կրթությունը, որակավորումը և մասնագիտացումը չի համապատասխանում տվյալ տեսակի կամ տեսակների գործունեություն համար անհրաժեշտ մասնագիտական որակավորման պահանջներին**:»:** **3.** Արտակարգ իրավիճակներում կամ արտակարգ իրավիճակով պայմանավորված արտակարգ դրության իրավական ռեժիմի պայմաններում բնակչության պաշտպանության բժշկական օգնության և սպասարկման միջոցառումների իրականացմանը, կառավարության սահմանած կարգով և ժամկետով, տվյալ տեսակի կամ տեսակների բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար կարող են ներգրավվել ավարտական կուրսի կլինիկական օրդինատորները:»: 4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված միջոցառումներին ավագ և միջին բուժաշխատողները կարող են ներգրավվել առնվազն 2 կրեդիտավորված ժամ տևողությամբ համապատասխան դասընթաց անցնելուց հետո: Ավարտական կուրսի կլինիկական օրդինատորները Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված միջոցառումներին կարող են ներգրավվել առնվազն 4 կրեդիտավորված ժամ տևողությամբ համապատասխան դասընթաց անցնելուց հետո: »:		
Նարեկ Զեյնալյան	<<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին>> օրենքում	«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից հետո՝	Ընդունվել է:	Ընդունվել է:

	լրացումներ կատարելու մասին>> օրենքի նախագիծ (Կ-556 09.04.2020-ԱՍ-*011/0*)	անմիջապես: **Սույն օրենքի 18.1 հոդվածով նախատեսված կարգավորումները տարածվում են 2020 թվականի մարտի 16-ի ժամը 18:30-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:»:**		